# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG64-CCB2-BF61-C171

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/197-26

<<02>>__հուլիսի__2026թ **ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս**

***Պատվիրատու՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ***

***Նախագծող՝ <<ՃԱՆՆԱԽԱԳԻԾ>> ԻՆՍՏԻՏՈՒՏ ՍՊԸ***

***Տնօրեն՝ Դ. ՔԱՐՏԱՇՅԱՆ***

**<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն Նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի, Մրգաստան բնակավայրում պուրակի և բազմաֆունկցիոնալ ժամանցի վայրի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:**

**Նախահաշվային արժեքը կազմում է՝ 119 132.61 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:**

**Առդիր՝ եզրակացությունը 3 էջից:**

**Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան**

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*

*տնօրեն Ն. Սիրեկանյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի, Մրգաստան բնակավայրում պուրակի և բազմաֆունկցիոնալ ժամանցի վայրի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը</u>

*Պատվիրատու՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ*

*Նախագծող՝ <<ՃԱՆՆԱԽԱԳԻԾ>> ԻՆՍՏԻՏՈՒՏ ՍՊԸ*

*Տնօրեն՝ Դ. ՔԱՐՏԱՇՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքիհիման վրա:

Նախատեսվում է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի, Մրգաստան բնակավայրում պուրակի և բազմաֆունկցիոնալ ժամանցի վայրի կառուցման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ քանդման և ապամոնտաժման աշխատանքների իրականացում, հողային աշխատանքերի իրականացում: Խաղահրապարակի կառուցման աշխատանքների իրականացում, բետոնե հատակի պատրաստում, միաձույլ ռետինե ծածկույթի պատրաստում, խաղասարքերի և բասկետբոլի վահանակների տեղադրում ամրացումով: Խճի նախապատրաստական շերտի իրականացում, բազալտե և բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով, բետոնե դեկորատիվ սալիկներից հատակի պատրաստում, սալվածքի կառուցում: Ավազակոպճային և խճակոպճավազային հիմքի իրականացում, մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի փռում: Բեմի կառուցման աշխատանքների իրականացում, բեմի հատակի երեսապատում բազալտե սալերով: Բետոնե աստիճանների կառուցում և երեսապատում բազալտե սալերով: Մետաղական ցանկապատի պատրաստում և տեղադրում, մետաղական տարրերի նախաներկում և ներկում: Ջրուցատաղավարների պատրաստում և տեղադրում: Շատրվանի կառուցման և տեխնոլոգիական աշխատանքների իրականացում: Նստարանների և աղբամանների

տեղադրում ամրացումով: Հիմքերի կառուցման աշխատանքների իրականացում, երկաթբետոնե միաձույլ սյուների, պարզունակների և հեծանների իրականացում, երկաթբետոնե միաձույլ ծածկի սալերի պատրաստում: Պատերի կառուցում տուֆ քարե շարվածքով ամրանավորմամբ, միջնորմների կառուցում թեթև բետոնե բլոկներից ամրանավորմամբ, բարավորների իրականացում: Տանիքի իրականացում մետաղական հիմնակմախքով, տանիքի ծածկույթի պատրաստում մետաղական կղմինդրով, կազմակերպված ջրահեռացման համակարգով: Ներքին և արտաքին հարդարման աշխատանքների իրականացում: Այումինե դռների և պատուհանների տեղադրում: Նախատեսվում է իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, սանիտարական սարքերի տեղադրում: էլեկտրալուսավորության ցանցերի անցկացում, լուսատուների տեղադրում: Արտաքին լուսավորության համակարգի և ոռոգման ցանցի անցկացում: Սեպտիկ հորի կառուցման աշխատանքների իրականացում: Երկաթբետոնե հավաքովի կլոր հորի մոնտաժում, երկաթբետոնե հորերի հատակի սալերի տեղադրում, երկաթբետոնե հորերի ծածկի սալերի տեղադրում ՝թուջե ծանր մտոցով: Մետաղական կոնստրուկցիաների տեղադրում և երկշերտ յուղաներկում: Պատերի արտաքին մակերեսների ջրամեկուսացում երկշերտ բիտումային մածիկով:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է՝ **119 132.61** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2403.74** և մեքենաների շահագործման ինդեքսը **3160.15**

Նյութերի արժեքն ընդունված է 2026թ. N04 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

***Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան***